



Խանութխանակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԽԻՐ 37




ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Խան



ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ هانراکيداق HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 37 || 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏ

Ա. Ռ.

ՓՈՔՐԻԿՆ ԶԱՐԵՀ



որածի կեանքիդ նուէրն է այս հաչ,
հաչելոյն Սիրոյ անբիծ սուրբ նաճանչ՝
Թափանցէ անմեղ հոգւոյդ բուրասան,
Հոն ծիւն ծաղկին ծիլք սուրբ զգացման:

Շուքին տակ հաչին՝ բող կեանքդ անխաչ
Անի, զարգանայ կայտառ սիրոյ ու լանչ,
Աչուկներդ պայծառ չտեսնեն արցունք,
Զունենան փուշեր կեանքիդ սուրբ ծաղկունք:

հաչին նշանը ուժն ըլլայ կեանքիդ,
Հաւատքը, Յոյսը, Սէրն ալ հոգիիդ.
Մի՛ հաւատար, առանց սիրոյ չկայ կեանք
Բայց խաչի կեանքն ալ ունի իր պսակ:

Թէ երբեք կեանքիդ ծովն ալեկոծի,
Հանեն մորիկներ, կոհակք ամենի,
Թէ գան բաղխելու հոգւոյդ նաւակին
Պինդ գրկէ, փարէ, Սիրոյ այս խաչին:

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴ.



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԼԻՆ ԵՐ ՆՈՐ ԱԶԳԵՐՈՐ

Բ.

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հնդկական գրագիտութեան պատմութիւնը սկսելէ առաջ, հարկ է ըսել թէ հնդիկ գրական լեզուն՝ Սանսկրիտը՝ Հնդիկ-Եւրոպական լեզուներու շարքին մէջ այն լեզուն է որ, ինչպէս Պարսկերէնը կամ Զանդիկը, ամէնէ քիչ կը հեռուայ իստող ազգերու կամ Ատրիականներու նախնական միակ և հառարակաց լեզուէն :

Սանսկրիտը Հնդիկներու հին և նուիրական լեզուն եղած է, որու մասին Փրանսացի և անգլիացի գիտուններու կարծիքն սա է թէ այդ լեզուն ազգակից լեզուն է Յունարէնի և Լատիներէնի :

Հնդիկ-Եւրոպական, կամ ըստ ոմանց, Հնդիկ-Գերմանական լեզուն վեց մեծ ճիւղերու կը բաժնուի. 1. Հնդիկ, 2. Իրանական, 3. Յունա-Հռոմէական, 4. Կեղտական, 5. Գերմանական, 6. Սլաւական : Սոյն լեզուները իստող ազգերու նախահայրերը ապրած ըլլալ կը կարծուին հին Բակտրիայի և Սոկտրիայի մէջ որոնք սահմանակից են այժմու Պարսկաստանի :

Գ Ի Ր Ե Ւ Լ Ե Զ Ո Ւ

Հնդիկ այբուբենը՝ որ Տրվանակարի (աստուածային) կը կոչուի, կը նկատուի այսօր ամէնէն պարզը, ամէնէն կատարեալը և ամէնէն աւելի կարողը իր ծայնական դասակարգութեամբ բացատրելու գրեթէ մարդկային ծայնին ամէն հնչումները :

Այս այբուբենը յիսուն գիր կը պարունակէ և երբայեցւոյ, Յունաց և Հռոմայեցւոյ այբուբեններուն հետ բաղդատելով՝ անոնց վրայ սա առաւելութիւնը ունի որ լեզուական գործարաններուն համեմատ դասակարգուած է և իր ստորաբաժանումներուն մէջ ծայններու ամէնէն նուրբ աստիճաններն անգամ կրնայ բացատրել :

Սանսկրիտը ունի Ա, Ի, ՈՒ ծայնաւորները և անոնց երկայնները, Բ, Լ լեզուական ծայնաւորները և առաջինին երկայն Ե և Օ և ԱԻ. ԱՈՒ երկբարբառները : Բացի Գ, Դ, Բ, Կ, Տ, Պ

բամբ տառերէն Չ, Ճ, և լեզուատամնային բամբեր ԴՍ, ՏՍ որ կը նշանակուին իբրեւ Դ, Տ իրենց տակը կէտով մը: Ասոնցմէ զատ Սանսկրիտը ամէն սլարզ բամբ գիր ունի իր հազազայինը ԳՂ, ԴՂ, ԲՂ, ԿՂ, եւայլն:

Սանսկրիտը իր ամէն կարգի բաղաձայներուն ռնգականն ունի, մի շրթնական ռնգական, մի լեզուատամնային, ամէնը հինգ հատ: Ունի չորս չչական տառեր և Հ հազազայինը: Այս լեզուին հնչումը, իր ձայնաւորներու նրբին զանազանութիւններուն համար, շատ դժուար է եւ յաջողելու համար երկար վարժութիւններու կը կարօտի մարդ:

* * * Սանսկրիտ բառը կը նշանակէ կաւարեալ. այս անունը տրուած է իրեն հակադրութեամբ Բրաքրիդ անունն որ կը նշանակէ բնական և որ կը տրուէր ռամկական լեզուին և կամ սոյն լեզուին այլ և այլ բարբառներուն. վասն զի Սանսկրիտ լեզուն կրօնական, դատական և զրական լեզուն էր, մինչդեռ Բրաքրիդը՝ ընթացիկ և ժողովրդային լեզուն, որ վերջէն գոյութիւն առած է:

Նոր-Հնդկական բարբառները՝ որոնք այսօր 140 միլիոն մարդոցմէ կը խօսուին՝ հին Բրաքրիդ բարբառներուն շարունակութիւնն են անշուշտ փոխուած ժամանակի ընթացքին մէջ: Այս նոր բարբառներուն գլխաւորներն են Հինտի, Հինտուատանի, Պէնկալի, Սինտի, Մուլդանի եւն:

Նոր Հնդիկ լեզու մըն է նաեւ Յիկաններու կամ Գնչուներու լեզուն: Յիկանները Հնդկաստանէն գաղթող ժողովուրդ մըն են Ասիոյ և Եւրոպայի այլեւայլ կողմերը ցրուած: Գնչուներու լեզուն բացարձակապէս Հնդկական է. խիստ ազաւաղեալ Բրաքրիդ մը, սակայն շատ բառեր կան եկամուտ այն ազգերու լեզուներէն որոնց մէջ ապրած են:

Գալով Սանսկրիտին, սա տեղի տուած է շատ դարերէ ի վեր այսինքն Քրիստոնէութեան գրեթէ առաջին դարերուն մէջ եւ իբրեւ գրական լեզու Բրաքրիդն է որ անոր յաջորդած է: Հիմա իբրեւ մեռեալ լեզու, Սանսկրիտը պրահմիներու և հմուտ հընդիկներու ուսման առարկայ է լոկ իբրեւ նուիրական լեզու: Հնդիկ գիտուններ երբեմն բարձր շարադրութիւններու համար կը գործածեն զայն:

Քերականութիւնը պարզ է. ունի երեք սեռ, ութը հոլով եւ երեք թիւ: Բայերու խոնարհումը ճոխ է և կանոնաւոր, կը շինուի առանց օժանդակ բայի և ունի վեց եղանակ: Նախադրութիւններու պաշտօնը կը կատարեն շատ մը յանգեր և վերջաւորութեանց փոփոխութիւններ:

Շարադրութիւնը ազատ է և բառերուն լուծէն, գրողին նպատակէն և խօսքին ներդաշնակութենէն յիշխում ունի. առկէ զատ, բարդութեան կարողութիւնը կատարելագոյն լեզու մը դարձուցած է զայն :

ՐԻՄԷՏ



ՁԿՆՈՐՄ ԵՒ ՀԱՄԱՐՈՐԴ

Ա. Ի. Ա. Ն. Դ. Ա. Վ. Է. Պ.

Ժամանակաւ մարդ մը կար, որուն հարստութիւնը փոքր գետակի մը եզերքը գտնուող խեղճ և աղքատիկ խրճիթ մ'էր, իր ապրուստը ձկնորսութեամբ կը հոգար, բայց և այնպէս իր վաստակածը ոչինչ էր գրեթէ. քիչ մը հացով և քիչ մալ ջուրով կ'ապրէր, սակայն իր աղքատութեան մէջ ամէն ատեն միշտ գոհ էր, որովհետեւ իր ունեցածէն աւելի բանի մը չէր բաղձար : Օր մը քաղաքը տեսնելու բաղձանքն ունեցաւ. երբոր հոն երթալ կը խորհէր, ճամբորդ մը հասաւ և ձկնորսին հարցուց թէ « գիշերը անցնելիք գիւղը շատ հեռու է » : — Գիւղը հասնելու համար 6 մղոն կայ, պատասխանեց ձկնորսն, շատ ուշ է, եթէ կ'ուզէք այս գիշեր իմ տնակիս մէջ կեցիք. մեծ հաճութեամբ կ'ընդունիմ ձեզի » :

Ճամբորդը հաւանութիւն տուաւ այս բանին : Ձկնորսն որ զայն կերակրել կ'ուզէր, կրակ վառեց որ քանի մը ձուկ եփէ : Ձուկերը խորոված միջոցին կը խնդար, կ'երգէր խիստ զուարթ բընութեան տէր մարդ մը կ'երևէր :

— Ի՞նչ երջանիկ էք, ըսաւ անոր հիւրը, բոլոր ունեցած ըստացուածքս կուտայի ձեզի չափ զուարթ ըլլալու համար :

— Ձեզի ո՞վ կ'արգելէ, ըսաւ ձկնորսն : — Իմ ուրախութիւնս ոչինչ է, ըսաւ հիւրը :

— Մեծ վիճշտ մը ունիք, ըսաւ ձկնորսը, որ կ'արգելէ զձեզ զուարթ և ուրախ ըլլալէ :

— Ափսո՞ս, ամէն մարդ զիս ամէնէն երջանիկ կը համարի : Ես վաճառական էի, մեծ հարստութիւն մը դիզեցի, բայց վայրկեան մ'իսկ հանգստութիւն չունէի. ամէն օր սնանկանալէ կը

վախնայի, միշտ մտմտութի մէջ էի որ իմ վաճառքներս երբէք չաւրուին, ծովովոր այ ունեցած նաւերս չընկղմին. ուստի թողուցի գործերս և հանգիստ կեանք անցնելու համար՝ մեր գործարանատէրին քով պաշտօն մը ստացայ, նախ անոր հաճելի երեւնալու բարեբաղդութիւնը վայելեցի և իր մտերիմ բարեկամը եղայ: Ամէն վայրկեան ստիպուած էի իմ գործերս ձգելու և անոր հետեւելու: Ինքը որսորդութիւնը շատ կը սիրէր, իսկ ես հանգըստութիւն, սակայն ստիպուած էի անոր հետ անտառներուն մէջ վազելու առաւօտէն մինչեւ երեկոյ, շատ յոգնած տուն կը դառնայի և պառկելու կը փափաքէի, բայց կիներ պարահանդէս մը, խնջոյք մը կուտար, և ինձ կ'ազաչէին հոն ներկայ գտնուի: Ես կ'երթայի, եւ գործարանատէրին բարեկամութիւնը զիս քիչ մը կը մխիթարէր: Գրեթէ տասն եւ հինգ օր կայ, երկու ամուսինք իրենց մէկ բարեկամին հետ խիստ մտերմաբար տեսնուիլ սկսան, անոր երկու յանձնարարութիւն ըրին, և ըսին թէ՛ խիստ պարկեշտ մարդ մը կը կարծեն: Սոյն վայրկենէն, լաւ հասկըցայ թէ՛ ես առոնց վստահութիւնը կորսնցուցած եմ: Շատ դիչերներ առանց քնանալու կ'անցուցի, մտմտութէս ինչ ընելս չէի գիտեր:

Ձկնորսը հիւրին խօսքը կտրելով ըսաւ.

— Գործարանատէրը ձեզի տխուր դէմք մը ցցուց, և ձեզ այլևս չէ՞ր սիրեր:

— Ներողութիւն կը խնդրեմ, ըսաւ հիւրը, տէրս ինծի սովորականէն աւելի բարեկամութիւն ցցուց. բայց խորհեցէք որ մինակ զիս չէր սիրեր: Ամէն մարդ կ'ըսէր որ վերոյիշեալ բարեկամին իրենց երկրորդ մտերիմ խորհրդակիցն եղած էր: Քիչ մնաց որ մեռնէի արտմութենէս. երէկ իրիկուն սենեկիս մէջ առանձնացայ, շատ տխուր էի, և երբոր սկսեցի լալ, յանկարծ տեսայ մարդ մը խիստ հաճելի դէմքով, որ ինձ ըսաւ.

— Ողայէ՛լ, գութս շարժեցաւ թշուառութեանդ վրայ, կ'ուզե՞ս հանդարտ սրտով ապրիլ, այս աշխարհիս մէջ, ազահութեան և շատ հարստութեան ոէրէն ե'տ կեցիր. այս տեղը թո՛ղ, երկու օր քալէ՛ առջի անգամ առջեւդ ելած ճամբով. մարդու մը հպարտութիւնը քեզի այնպիսի տեսարան մը կը պատրաստէ, որ քու հպարտութիւնդ բուժելու կարող է. երկու օր քալելէդ վերջը դարձիր, և ես հաստատ գիտեմ ոչ գուն ալ հանգիստ և խաղաղ կեանք մը պիտի վայելես այնուհետեւ»:

Արդէն օր մը քալեցի այս խրատին հնազանդելու համար, և տակուին վաղն ալ պիտի քալեմ, բայց ինծի խոստացած հանգստութիւնը վայելելու համար շատ պիտի աշխատիմ:

Ձկնորսն այս պատմութիւնը լսելով, շատ դարմացաւ, տեսաւ որ մարդ մը իր հարստութիւնը ուրիշի մը խօսքէն և նայուածքէն կ'սպասէր: «Ուրախ պիտի ըլլամ ձեզ տեսնելով որ բժշկուած էք այդ հոգեկան ախտէն: Աւարտեցէք ձեր ճամբորդութիւնն և յետոյ վերադարձէք իմ խրճիթս: Ես ալ հիմակ քաղաք պիտի երթամ, ուր պիտի զսւարձանամ կարծեմ տեսածներէս: »

— Շատ ցաւալի է այդ խորհուրդդ, պատասխանեց ճամբորդը, քանի որ հիմայ այս տեղ շատ երջանիկ էք, ինչո՞ւ համար դուք զձեզ թշուառ ընելու կ'աշխատիք: Այսօր ձեր խրճիթը ձեզի բաւական է, բայց երբոր մեծ և փառաւոր տուները տեսնէք, ձեր խրճիթը ձեզի շատ փոքր և շատ ողորմելի պիտի երեւայ. դուք ձեր հագուստէն գոհ էք, որովհետեւ ձեզի կը ծածկէ, բայց երբոր հարուստներուն փառաւոր զգեստները տեսնէք ձեր ունեցածէն շատ դժգոհ պիտի ըլլաք: Դուք ձեր պարզ հացէն ու ջուրէն զատ ուրիշ կերութեամբ չունիք, բայց երբ տեսնէք որ այնտեղ հազար տեսակ համեղ կերակուրներ ու անուշեղէններ կ'ուտեն, միշտ պիտի փափաքիք որ դուք ալ այդ կերպով ապրիք:

— Պարո՛ն, ըսաւ ձկնորսը, աշխարհ լեցուն է այնպիսի մարդիկներով, որոնք ուրիշները կը խրատեն, մինչդեռ իրենք զիրենք չեն կրնար կառավարել:

Ճամբորդն երբեք պատասխան չտուաւ, որովհետեւ պարկեշտութեան դէմ էր զինքը հիւրընկալող մարդուն տանը մէջ անոր դէմ խօսիլը: Հետեւեալ օրը ճամբորդն իր ճամբան շարունակեց, երբ ձկնորսն ալ դէպի քաղաք ճամբայ ելլելու կը պատրաստուէր:

Երկու օր վերջը, Ազայէլ որ արտաքոյ կարգի պատահարի մը չէր հանդիպած, ձկնորսին խրճիթը վերադարձաւ, տեսաւ որ ձկնորսն իր խրճիթն դրան առջեւ նստած էր գլուխն ձեռքերուն մէջ առած և աչքերը գետին տնկած:

— Ինչո՞ւ համար կը մտածէք, հարցուց Ազայէլ:

— Կը մտածեմ որ չափէն աւելի խեղճ եմ, ըսաւ անոր մեր ձկնորսը, Աստուծոյ ի՞նչ ըրի որ զիս այսչափ խեղճ ըրաւ, քանի որ աշխարհի մէջ հարուստ և գոհ մարդիկ շատ կան:

Սոյն վայրկենին այն մարդն՝ որ Ազայէլին երկու օր ճամբորդել հրամայած էր, և ու հրեշտակ մէր, երեւցաւ և ձկնորսին ըսաւ.

— Ինչո՞ւ համար Ազայէլի խրատներուն չի հետևեցաք. քաղաքին չքեղ տեսարանները ձեր վրայ փառասիրութեան մոլուրութիւնը յառաջ բերին. այն ճոխութիւնները քու վրայէդ վերուցին մտքիդ հանդարտութիւնը և ուրախութիւններդ. բաղձանքներդ չափաւորէ՛ որ այս թանկագին օգուտները վայելես:

— Դուք մեծ մեծ կը ջարդէք, բայց ինծի համար անկարելի է ըսաւ ձկնորսը, կ'զգամ որ միշտ թշուառ պիտի ըլլամ, մինչեւ որ Աստուած իմ վիճակս փոխել չի հաճի:

— Աստուած երբեմն ազահներուն ինդիրքը կը կատարէ, ըսաւ հրեշտակը, բայց զայն պատժելու համար:

— Է՛հ, քեզի ի՞նչ պէտք, ըսաւ ձկնորսը, եթէ միայն բազմալով գործը լիննար, ձեր սպառնալիքները բնաւ բանի տեղ չէի դնէր:

— Որովհետեւ, դուն քեզ կորսնցնել կ'ուզես, պատասխանեց հրեշտակը, շատ աղէկ, կրնաս Աստուծոյ երեք բան խնդրել, որ քեզ պիտի չնորհէ:

Ձկնորսն ուրախութենէն խնդրեց՝ որ իր խրճիթը մեծ ու չքեղ բնակարանի մը փոխուի, և ընդ հուպ կատարուեցաւ իր խնդիրքը: Ձկնորսն այս դէպքին վրայ զարմանալէ վերջը, մըտքէն անցուց որ իր դրան առջեւի փոքրիկ գետակը մեծ ծովու մը փոխուի. ինչ որ մտքէն անցուցած էր, տեսաւ որ ուզածին պէս եղաւ. և անոր միայն երրորդ բաղձանքը մնաց. բաւական ժամանակ մտածելէն յետոյ՝ մաղթեց որ իւր փոքրիկ նաւակը փառաւոր նաւու մը փոխուի ոսկի և ադամանդ բեռցած. իսկոյն մեր մարդը տեսաւ նաւը, հոն վազեց զարմանալով այն անբաւ հարստութիւններուն վրայ, որոնց տէր եղած էր. բայց հազիւ թէ հոն հասաւ, մեծ փոթորիկ մ'ելաւ, ձկնորսն ուզեց ծովեզերքն ելլել, բայց ի գո՛ւր: Յետոյ իր այս արգաթսիրութիւնն անիծեց. անօգուտ եղաւ, ծովը զայն կլլեց բոլոր իր հարստութեամբ:

Հրեշտակն ըսաւ Ազայէլի. այս օրինակը որչա՛փ խելք կը սորվեցնէ: Ազայէլ վախնալով խոստացաւ հրեշտակին հնազանդելու: Թողուց քաղաքի բնակութիւնը, ճոխ և չքեղ բնակարանը, և եկաւ գիւղը հաստատուեցաւ, ուր աղջկան մը հետ ամուսնացաւ, որնոր իր հարստութենէն աւելի առաքինի էր. փոխանակ իր հարստութիւնները շատցնել փափաքելու, ջանաց չափաւորութեամբ վայելելու եւ աւելցածն ալ աղքատներու բաժնելու: Բիչ ատենէն գոհ եւ երջանիկ եղաւ, և օր մը չանցուց առանց Աստուծոյ շնորհակալ ըլլալու, որ իր երջանկութիւնը թունաւորող ազահութենէն բժշկած էր զինքը:

ՓՈՔՐԻԿ ՏԻՔԸ ԵՒ ՀՍԿԱՆ

(Հ Է Ք Ս Ա Թ)

Պզտիկ Տիք առտուընէ մինչեւ իրիկուն կ'երգէր կամ կը սուլէր: Փոքր այլ զուարթ ու երջանիկ տղայ մըն էր:

Օր մը անտառի մը մէջ մտաւ, որ իր բնակարանէն շատ հեռու չէր: Շատ անգամներ մինչեւ անտառին եղերքը գացած էր, բայց անտառը իրեն այնքան մութ թուած էր որ երբեք հոն մտնելու փափաք չէր զգացած: Այն օրը Տիք շատ աւելի զուարթ էր, արեւը այնքան փայլուն կը գտնէր. չուքը այնքան քաղցր եւ ծաղիկները այնքան գեղեցիկ որ, կ'երգէր կամ կը սուլէր անտառը թնդացնելու աստիճան: Նախ բաւական ժամանակ ծառերուն եւ ծաղիկներուն հետ զուարճացաւ: Ինքզինքը կը շնորհաւորէր այնքան գեղեցիկ տեղ մը մտած ըլլալուն համար: Պրզտիկ առուակ մը օճապտոյտ խոխոջելով կ'անցնէր, ջուրերը Տիքի այնքան յստակ երեւցան որ, այդ յստակութենէն հրապուրուած ծռեցաւ խմելու:

Ընդհուպ զգայ որ մէկը իր ետեւէն բռնած էր, ետ դարձաւ, եւ ինքզինքը հսկայ մարդու մը ձեռքերուն մէջ գտաւ, որ իրմէ հարիւր անգամէ աւելի մեծ էր: Տիք հսկային բթամատէն աւելի մեծ չէր: Հսկան վայրի ուրախութեամբ մը կը դիտէր զինք բերանը բացած եւ ազմուկ մը հանելով որմէ Տիք կը սարսափէր: Խեղճ պզտիկը կը կարծէր թէ հսկան մէկ ուժգով զինք պիտի կլլէր: Բայց այնպէս չեղաւ, հսկան զինք մեծ տոպրակի մը մէջ դրաւ ու տարաւ: Պարապ տեղը խեղճ կալանաւորը կը կռուէր տոպրակին հետ եւ փախչելու տեղ կը փնտռէր: «Երբե՛ք չսլիտի կրնաս հոնկէ փախչիլ», ըսաւ հսկան, ահաւոր խնդուքով մը:

Վերջապէս տուն հասան: Սոսկալի եւ տխուր տուն մ'էր, չորս բոլորտիքը մեծ պարտէզով մը, առանց ծառի եւ ծաղկի: Հսկան հանեց Տիքը իր տոպրակէն: Դժբաղդ կալանաւորը կարծեց թէ իր վերջին ժամը հասած է, որովհետեւ չորս կողմը նայելով տեսաւ որ մեծ կրակի մը շուրջը չորս հատ ուրիշ հսկաներ իրենց ընկերոջ կերակուր պատրաստելու վրայ էին:

Այսու ամենայնիւ հսկան չսպաննեց զայն, այլ բանտի մը մէջ դրաւ որուն չորս կողմը երկաթեայ ցողերով շրջապատուած էր: Տիք յուսահատած, խենդի պէս գլուխը երկաթներուն կը զարնէր: Բանտին մէջ մէկ մը հոս մէկ մը հոն կը վազէր, մայրը

կը կանչէր, բայց աւա՜ղ... Հոկան իրեն քիչ մը չոր հաց եւ ջուր տուաւ, ու զինք նորէն մինակ ձգեց,

Յաջորդ օրը նորէն այցելեց: Տեսաւ որ Տիք ոչ հացին դպած էր ոչ ջուրին: Ոչն առնեց բռնեց գլուխը եւ կլկեցնել տուաւ քանի մը հացի փշրանքներ, զորս Տիք ոչ ուզեց ուտել եւ ոչ ալ կլկել: Յետոյ նորէն զինք մինակ ձգեց մթութեան մէջ:

Ապա հոկան նորէն եկաւ, եւ ուզեց որ երգէ. ինչպէս որ կ'ընէր ուրախ գուարթ եղած ժամանակ: «Երգէ՛, երգէ՛», կ'ըսէր անդադար: Խեղճ Տիք շատ տխուր էր ինչպէս կրնար բանտի մը մէջ երգել:

Այս անգամ հոկան կատողեցաւ. «Քեզ լաւ երգել կրնամ տալ» ոռնաց բարկութեամբ, դուռը բացաւ ու Տիքը վզէն բռնեց:

Տիք ճիշդ արձակեց, տապալկեցաւ հսկային ձեռքերուն մէջ եւ ինկաւ Վեռա՜ծ...

Աւա՜ղ, փոքրիկ ընթերցողներս, խեղճ Տիք փոքր բոչուն մըն էր, իսկ հոկան չափ տղայ մը:

ԿԱՐԱՊԵՏ Յ. ԹԵՐՃԷՄԱՆԵԱՆ

(Նամանդումեամբ Գերմաներէնին)

ԱՄԲԱԿՈՒՄԻ ԼՈՒՅԻԱՆԵՐԸ

(Շարունակութիւն 35րդ Թիւէն եւ վերջ)

— Պարտքով, քսան դահեկանի, ըսաւ Ֆրա:

— Պարտքով քսան դահեկան, կրկնեց Ամբակում: Եւ կորսնցուց:

— Քառասուն դահեկան, ըսաւ Ամբակում, իմ կողմէս, կամ պարտքէս կ'ազատիմ:

— Անանկ թող ըլլայ:

Ամբակում նորէն կորսնցուց:

— Հիմա, ամբողջ պարտքդ՝ լուրիաիդ փոխարէն:

Եւ Ամբակում ընդունեց: Գլուխը կը դառնար, ձեռքերը կը դողային:

— Չէ՛, ըսաւ թուղթերը տալով, այս ձեռքը պիտի վաստակիմ:

Եւ կորսնցուց: Երջանիկն Ֆրա, տոպրակը էջուն վրայէն վար առնելով՝ ըսաւ.

— Գալ անգամ աւանակիդ համար կը խաղանք:

Ի՞նչ ընէր խեղճ Ամբակում: Չէր համարձակէր՝ տուն դառնալ և կնոջը խոստովանել: Ուրիշ պարկ մը լուրիա գնելու համար ոսկի մը պէտք էր: Երես ալ չունէր մէկէն փոխ դրամ ուզելու:

Հինգ վայրկեանի չափ խորունկ մտմտաց եւ վստահ սափրի-

չին գաղտնապահութեան վրայ (խաղացողները իրար բերան չեն տար) քթին տակէն մրմուռաց :

— Լուբիաս չմնաց որ ցանեմ, բայց չուզէն ցանելու պէս կ'ընեմ: Զուն գիւրաւ կը խաբուի. մինչեւ հունձքին ժամանակը: Աստուած մեծ է: Ի՛նչ գիտես ի՛նչ չըլլար լուբիաներուս:

Իրաւ ալ շատ բաներ պատահեցաւ Ք... գիւղին քէջ: Արէնէ առաջ Ամբակում դարձի եկաւ. խղճի խայթէն նեղողքով եւ վախնալով որ գաղտնիքը երեւան կ'ելլէ, ա՛յ անգամ մըն ալ ձեռքը թուղթ չառաւ: Բոլոր ժամանակը, ամբողջ ուշը լուբիայի դաշտին նուիրեց: Ամէն իրիկուն արեւը մարը մտնելէն ետքը, աղւոր մը կը ջրեր. երբ ցերեկը արեւին տաքուն հողին երեսը կը կարծրաւ ցընէր, Ամբակում կամաց մը կը փորէր որպէ՛ս գի հունքերը շուտով ծլին: Ամբողջ դաշտին մէջ վայրի խոտի տերեւ մը իսկ կարելի չէր տեսնել, այնքան խնամով մաքրուած էր:

Դրացիները կը հիանային վրան. կինը բան մը չէր հասկնար եւ Պարոն Ղազարոս ամէն գիշեր քունին մէջ արգելքի տակ կ'առնէր լուբիաները եւ ոսկի ակնոց մը կը գնէր:

Սանկ նանկ տասն եւ հինգ օր անցեր էր եւ գրեթէ բոլոր լուբիաները ծլեր էին. ամբողջ դաշտեր սիրուն կանաչով մը ծածկուած էր, մինակ Ամբակումի դաշտը եղածիս պէս կը մնար:

— Ամբակում, լուբիաներդ ի՞նչ կ'ընեն կոր:

— Անոնք հողին տակը կ'աշխատին:

Եւ լուբիայի ծիւերը կը մեծնային. գիւղացիներ գացին երկար եղէգներ կտրելու: Ամբակում ալ եղէգներ կտրեց միւսներուն պէս, աղւոր մը մաքրելով ծայրերը տաշեց ու դաշտը տարաւ:

Երկու շաբաթ եւս անցան եւ Ք... գիւղի բոլոր լուբիաները եղէգներուն վրայ մագլցեցան, մինակ Ամբակումի լուբիաները չեւեցան. դաշտը առաջուան պէս լերկ կը մնար:

— Ամբակում, ըսաւ Զուն, մեր լուբիաները շատ ուշ մնացին:

— Տեսակէն է՛. պատասխանեց Ամբակում:

Բայց Ք...ի բոլոր լուբիաները ծաղկեցան, ծաղիկները պտուղի փոխուեցան, պտուղները երկարեցան ու հատիկ կապեցին եւ մինակ Ամբակումի լուբիաները հողին տակէն վեր չէին ելլեր: Գիւղին մէջ փսփսուքը սկսաւ. շատերը գացին մօտէն տեսնելու անիծեալ հողը՝ ուր սերմը չէր բուսներ: Պարոն Ղազարոս իրար անցաւ եւ Զուն դաշտէն չէր հեռանար:

Իրիկուն մը Զունի մայրը, հօրաքոյր Տիտ, այսինքն Ամբակումի զոքանչը, հակառակ իր ծերութեան, ելաւ անիծեալ դաշտը դնաց մօտէն տեսնելու համար եւ լաւ մը քննելէ վերջ, իբր գիւ-

դին ջատուկներու արհեստապետը, վճռեց որ յաշտը կախարդուած է եւ պէտք է կախարդողը գտնել:

Ասանկ պարագաներու մէջ ամէն գիշեր, իրեն սովորութիւնն ունի. Թ... գիւղին մէջ ալ հետեւեալ կերպով կ'ընէին:

Հօրաքոյր Տիտ իրիկուֆ մը գնաց խոհանոցի անօթներ վաճառողի մը խանութին առջեւ սլքտալը եւ իբր թէ խանութպանին չտեսած մէկ վայրկենին պզոյիկ կաթսայ մը գողցաւ եւ շրջազգեստին տակ պահած տուն լերաւ: Անմիջապէս մէջը ջուր լեցուցին եւ կրակին վրայ գետեղ' ցին. երբ եռալ սկսաւ, ջրչափ որ



կտորած ասեղ, գամ, մանր մուներ երկաթեղէն գտան՝ մէջը լեցուցին:

— Հիմա՛, աս ասեղներն, կը բացատրէր պառաւ Տիտ, եփ ջուրին մէջ տապալտկելով՝ դաշտը կախարդողին միսերը կը մտնեն, եւ ան ալ ցաւին չգիմանալով կ'ելլէ հոս կուգայ... գուցէ հիմա ճամբան է...

Արդէն ամբողջ թաղին մէջ տարածուէր էր այս ջուրը, մինակ Պարոն Ղազարոս տեղեկութիւն չունէր եւ սովորականին պէս սափրիչ Ֆրայի խանութը կ'երթար:

— Գիտէ՞ք, Պարոն Ղազարոս, ըսաւ սափրիչը, մեր Ամբակունքը

հարստացաւ, մախգեհին մէջէն երկու հարիւր ոսկի պարունակող խաւանօզ մը գտեր է:

— Ի՞նչ կ'ըսես, պօռաց պարոն Ղազարոս, իրա՞ն է ըսածդ. իմ գանձելի տոմսակիս օրն ալ այսօր է ճիշդ, երթամ դրամս ու գեմ:

— Շո՛ւտ գացէք ուրեմն. պարոն Ղազարոս, ուշ մի՛ մնաք. թշուառականը բոլոր գտածը խաղի կուտայ նորէն:

Եւ պարոն վաշխառուն հեւ ի հեւ ճամբայ ինկաւ:

... Ամբակումի տունը՝ տակաւին կաթսան կրակին վրայ էր. առէնուն ալ համբերութիւնը հատնելու մօտ էր. երբ դրացի աղջիկ մը՝ որ իբր պահնորդ դրուած էր պատուհանը՝ գոչեց.

— Ո՛հ էլը կուգայկոր, ոսկի ականոցով, ձեռքը թուղթ մը բռնած է ...

— Ղազարոսն է, գոռաց Զուն դուռը վազելով: Անպիտանէն կը կասկածէի արդէն:

Ու բոլոր տնեցիները դուրս թափեցան՝ որը աւելի կոթ մը առած, ուրիշ մը հաստ գաւազան մը: Այ ի՞նչ պատահեցաւ դուք գուշակեցէ՛ք, որովհետեւ պարոն Ղազարոս բան մը չըսէր այդ դէպքին վրայ, ո՛չ ալ Ամբակումի բարեկամներն: Միայն, երբ բաղդաւոր խաղամուր իրիկուան տուն դարձաւ, բակին մէկ անկիւնէն թուղթ մը գտաւ: Ի՞ր պարտամուրհակն էր, զոր Ղազարոսի տուած էր:

— Կը տեսնե՞ս, Զուն, աղէկ սերմանողը բան մը վրայ չիտար, և հողն ալ իր ստացածը կը վերադարձնէ հարիւրապատիկ աւելի: Եթէ ընթերցողներս կը հաճին, այս խօսքերն իբր պատմութեանս բարոյականը պիտի նկատենք:

Յաջորդ տարիներն Ամբակումի լուրիաները կանոնաւորապէս կը ծլէին... որովհետեւ չէին կախարդուէր:

Թարգմ. Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԲՕԼ ԱՐԷՆ

ԱՇԽԱՐՀԻՍ ԺՐՋԱՆԸ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՄԱՐ

Ա.

Վէպ մը չէ ասիկա, այլ ճշմարիտ և ստույգ պատմութիւն մը, այնքան ճշմարիտ՝ որ հրապուրուելով իր վաւերականութենէն, ուղեցի իմ փոքրիկ ընթերցողներուս պատմել զանի, առանց ուէ բան մը հնարելու իմ քովէս:

Կամքն ու խելացութիւնը այնչափ պարզ բաներ չեն որ աւելորդ ըլլայ զանոնք ամէնուն յանձնարարել :

Ժան տը Ս. . . ուսեալ անձ մը, բայց եւ այնպէս վերստին սորվելու չափազանց փափաքող մը, շարունակ կը ձանձրանայ Բարիգի մէջ, ա'յնպիսի մայրաքաղաքի մը մէջ, ուր կը վազեն ամէն ազգէ զբօսասէրներ : Հոն զուարճանալու և ժամանակին անցնելու, բայց ինչպէս ըսինք, Պ. Ս. միշտ կը ձանձրանար. իրեն յարմար գործ մը չէր կրնար գտնել, վասն զի և ո'չ մէկ գործ կամ գբաղում արգելքներ պիտի հանէր իրեն յաղթելու : Որ և է արհեստի համար ընա'ւ կոչում չունէր : Հարուստ հօրմէ՛ բաւական ժառանգութիւն ստացած էր. բայց անոր քաղցրութիւններէն կշտացած էր ինչպէս նաև կործանման կծու հեշտանքներն ալ վայելած էր : Երբ ալ մէկ փարան չմնայ, չուզեց փոխառութիւն մ'ընել իր ազգականներէն, ինքզինքն անոնց քամահրանքին ու արհամարհանքին չենթարկելու համար, նոյնպէս իր բարեկամներուն ալ չդիմեց. անոնց ծաղրին տակ չիյնալու, և մանաւանդ զանոնք թշնամի չընելու համար : Վերջնականապէս որոշեց ճամբորդել :

— Ո՞ր պիտի երթաս, հարցուցին իր ամէնէն մտերիմ բարեկամներն, որոնք գիտնալով անոր կամակոր ընաւորութիւնը, թէ իրենցմէ ստակ չպիտի ուզէ, հանգարտ սրտով կը հետաքրքրուէին անոր արտակարգութիւններէն :

— Յառաջարան մը ընելու համար, աշխարհիս չըջանը պիտի ընեմ. վերջը տեսնենք :

— Ա՛հ, ծանր գործ. միթէ միջոց ունի՞ս այդ քմահաճոյքդ կատարելու :

— Պիտի գտնեմ միջոցը : Կարելի չէ որ խելացի ու անյողդողդ կամքի տէր մարդ մը ասանկ ճամբորդութեան մը մէջ՝ ուզածին չափ ապուշներու չհանդիպի՝ ապրելու համար : Հիմա խընդիրը ասկից հավր երթալն է :

— Արեւմտեան երկաթուղիի ընկերութենէն ձրի տոմս մը պիտի առնեմ քու անունիդ, յաւա ընկերներէն մին, որ խմբագիր էր և առանց գրպանէն ստակ մը հանելու ձրի ծառայութիւններ մատուցանելու պատրաստ էր :

— Կ'ուզես զիս փորձել : Բայց ատիկա շնորհ մը պիտի համարուի : Կ'ողբեմ ես շահիլ իմ ճամբու ծախքս, քալելով պիտի երթամ :

Ու երբ գրպաններուն կը զարնէր : Հարցուցին իրեն :

— Գրպանդ ո'րչափ ստակ ունիս :

— Վաղը կրնամ պատասխանել, երբ պէտքերս գնեմ :

Պէտքեր ըսածն էր՝ զոյգ մը ամուսն կօչիկ, գաւազնն մը եւ կաշիէ պայուսակ մը, որուն մէջ աւելի հաց կար՝ քան փոխնորդ ճերմակեղէն: Յաջորդ օրը, պայուսակը կռնակը՝ ժան կ'ըսէր իր բարեկամներուն՝ քսակը ցուցնելով. «Ահա՛ մնացածը, ամէնը 12 Փրանք կայ»:

Ընկերները ուզելով մասամբ մը մասնակից ըլլալ սոյն տարօրինակ ուղեւորութեան, առաջարկեցին իրեն ընկերանայ մինչև Ռուան: Առանց ձեւակերպութեան ընդունեց, անոնց մնաւորութենէն օգուտ քաղել ուզելով, և թողուց որ իր ուղեգիրը վճարեն: Բայց Ռուանի մէջ բաժնուեցաւ, և հետիոտն կարեց անցաւ մնացած իննսուն քիլոմէթր տեղը, պայծառ երկինքի տակ պառկելով, իր պարկին ուտելիքներէն ուտելով և միայն ջուր խմելով:

Երբ Հափը հասաւ, ժամանակ չկորսնցուց, դէպի Լամբրիկա մեկնելու պատրաստ չոգենաւ մը գտաւ, որու նաւապետէն ձրի ճամբորդութիւն մը խնդրեց փոխարէն առաջարկելով իր մատուցանելիք ծառայութիւնները: Ժան կ'ապշեցնէ նաւապետը իր պաղարինութիւնով, համարձակախօսութիւնովը կը հմայէ զայն և ձրիաբար կ'ընդունուի չոգենաւին մէջ, տասը սանդիւմ միայն խորելով իր դրամագլուխէն, այս ալ վարդ մը նուիրելու համար ամերիկուհիի մը զոր որոշած էր իր մտածումներուն առարկան ընել՝ ամբողջ ուղեւորութեան մէջ:

Գեղեցիկ և հաճոյալի եղաւ ճամբորդութիւնը: Նիւ Եօրք հասնելով՝ հրաժեշտ առաւ իր մտածումներուն առարկան եղող ամերիկուհիին՝ ինչպէս անհետացած երազէ մը. շնորհակալ եղաւ նաւապետէն, որ քիչ մնաց իր մատները կտարէր զգացած յուզումէն: Այս առաջին յաջող շրջանէն հպարտ, ոտքը գետին զարկաւ եւ երգում ըրաւ որ այդ իրիկուն լաւ ճաշ մը ընէ ու պանդոկի մը մէջ պատսպարուի, առանց մուրալու և առանց սանդիւմ մը ծախսելու իր տասնըմէկ Փրանք իննսուն սանդիւմէն: Ա'լ վարդ գնելու մտադիր չէր:

Այն օրն իսկ գիշերօթիկ վարժարան մը մտաւ Փրանսերէնի դասեր տալու համար ու անդիերէն լիզուն ալ աւելի լաւ սորվելու համար: Արդէն բաւական լաւ կը խօսէր սպաներէնն ու իտալերէնը: Ութ օր վերջը կրցաւ թուղթէ չափկի կեղծ օձիքներ ու թեւնոցներ ծախու առնել: Իր ուղեւորութեան մէջ մտադրած էր ամենեւին ճամբորդութեան տպաւորութիւններ գրի չառնուլ. գործածած միակ թուղթն ասոնք եղան:

Քանի մը չաբաթ ետքը, մեր ճամբորդը կը հեռանար Նիւ Եօրքէն, բաւական գումարով մը՝ Սան Ֆրանչիսքօ երթալու համար: Մեծ մեծ ծրագիրներ կը պայծառատէր իր մօքին մէջ այն-

տեղ գործադրելու համար: Բայց նենգաւոր բաղդը ուղեց զինքը
քիչ մը փորձութեան ենթարկել: Սան Ֆրանչիսքօի մէջ ծանրա-
պէս հիւանդացաւ, բոլոր դրամը ծախսեց տենդին դէմ մաքա-
ռելու համար, և գրեթէ ընկճուած՝ հիւանդանոց փոխադրուե-
ցաւ: Բնութիւնը և կամքը բուժեց զինքը. հակառակ բժիշկներու
կարծիքին, որոնք զինքը շատո՞նց անդիի աշխարհ զրկելու դա-
տապարտած էին:

Մնացեալը յաջորդով



ՕՐԵՐԸ

Վարդի քերքեր՝ բուռումնաւէս ու փափուկ,
Աննիւք շողեր՝ ուր կը քրքոյայ մեր հոգին,
Թիթեռնիկներ, հոլաքեւեան, խուսափուկ՝
Օրերն անուշ մեր կեանքին:

Ծիածանին ճառօցներով գունավառ,
Թռչունին բիւր դրասանցներով ակաղձուն,
Դեպի հեռուն կ'երթան օրերն անշուշտ՝
Ամառ, ձմեռ ու աշուն:

Ձիւն կարապներ՝ ջինջ կապոյտով հրմայուն՝
Օդին մէջ կախ՝ հազիւ պահ մը կ'երեւին՝
Խոյս կուտան շուշ՝ հորիզոնին ծոցն անհուն՝
Օրերն՝ ինչպէս հեւքս հալիմ:

Դեղածիծաղ, անուշ օրեր դուք կեանքի,
Ո՛ւր այսպէս, ո՛ւր կ'երթաք անդարձ ու անհետ,
Հրմայն՝ որ յար ձեր հետքերէն կը ծագի՝
Ի՞նչու կ'անցնի ձեզի հետ:

Ինչո՞ւ մարին ճառագայթներն այն շողուն՝
Ձոր կը ցանեմ ձեր հրմայնոս վազիկն մէջ,
Այդ վառ ցոլերն հազիւ մեզի կը թողուն՝
Պատահներու նքստմ էջ:

Բայց դուք, ի՞նչ փոյթ, օրեր կեանքիս վաղանցուկ,
Ըլլաք աշուն հոգեսարսուռ տեղերն,
Դալար ոտերն ըլլաք զարնան գեղաշուկ՝
Ձեզ արարիչն է երկներ:

Վազեցե՛ք օ՛ն, գազե՛ք, եկե՛ք շարունակ
Անձանօրին սարսուռներով յար շահան,
Ձեր սուր վազերն՝ անմահութեան ներդաշնակ՝
Պիտի եջեր մեզ կարդան:

Ու մարդիկ ձեր պիտի վազեն ետեւն,
Միշտ ի խրնդիւր սնոր՝ որ շահ է հեռուն,
Ու հիասքափ ձեզ սրտսլաւեն ու զովե՛ն՝
Աչխրե՛ն ձեզ սեւեռուն:

Տարէնտէ

Մ. Ա. ԹՈՒՐԵԱՆ

ԶՈՐՍ ՀՈՎԵՐԷՆ

Բիցպուրկի մէջ՝ ելեքտրական մեքենաներու արտադրած արհեստական կայծակներէն տարօրինակ արկած մը պատահեր է: Յուլիսի 4ի նախորդ օրը քաղաքացի մը խոշոր ցօղի մը վրայ ահագին դրօշակ մը կախեր էր. փոթորիկ մը փրթելով հովին սաստկութենէն դրօշակը ձողովը միասին կոտրեցաւ ու ինկած ժամանակը կտրեց փրցուց ելեքտրական հոսանքի մը հաղորդիչ թելը, որու ծայրը՝ փողոցը լճացած ջուրի մը մէջ մտաւ. Ելեքտրականութիւն արտադրող գործարանը այս արկածին անտեղեակ, կը շարունակէր տինամօները գործել, այնպէս որ հաղորդիչ թելը մէջը ինկած ջուրը շարունակ կ'ելեքտրականանար: Քանի մը ժամէն փոթորիկը դադրեցաւ, անձրեւը կտրեցաւ ու անցուդարձը սկսաւ փողոցներուն մէջ: Անցորդներէն մին անգիտակցաբար ելեքտրացած ջուրին մէջ կոխեց. չանթահար գետին ինկաւ: Նոյն պահուն վրայ հասած կառքի մը ձիերը մտան ջուրին մէջ ու հագիւ ոտքերնին ջուրին մէջ դրած՝ տապալեցան կայծակնահար: Կառքը երեք հոգի կը պարունակէր, երկու կին եւ այր մը, որոնք սարսափահար դուրս նետուեցան դռնակներէն ու մահն է որ գտան աղետալի ջուրին դաշելով:

Ժողովուրդ մը որ անուն մը կ'ուզէ. — Միացեալ Նահանգաց բնակիչները ձանձրացած իրենց յատուկ անուն մը չունենալէն խոշոր պարզեւ մը կը խոստանան բարերազգ կնքահօրը մը որ կը մկրտէ գիրենք յարմար ու գեղեցիկ յատուկ անունով մը:

Ամերիկայի անունը կուտային անոնք իրենց, բայց այդ ածականը կը յարմարի նաեւ ամբողջ Նոր-Աշխարհի բնակիչներուն ալ, ինչպէս Բաթափօնին ու Կուայանայի բնակիչին: Ամերիկայի

Միացեալ Նահանգ յորջորջումը կը կրեն նաեւ Մեքսիկա ու Պրագլիա :

⑤

Կայ եանքի բացառութիւնը , որով առաջին անգամ Անգլիա մկրտեց իր անհնազանդ գաղութը . սակայն այս անունն ալ Նոր-Անգլիոյ (Նիւ-Եօրք , Պօթօն , եւն .) քաղաքացիներուն յատուկ է , մինչդեռ հարաւային (Նիւ-Օրլէան) և արեւմտեան (Սան-Ֆրանչիսքօ , Սէն-Լուի) գաւառները իբր անարգանք մը կ'ընդունին այդ բառը :

Մինչեւ հիմա բաւական անուններ առաջարկուած են , որոնց մի քանին կը յիշեցնենք : Unido-Usonal որ կազմուած է սոյն նախադասութեան իւրաքանչիւր բառի նախաստաւերէն . United State of North America : Եւ ի վերջոյ United Statesians , որ ամէնէն ընդունելին կը նկատուի . ոոստի հիմակուրէն վարժուինք ըսել Սքաքիլեան Հանրապետութիւն :

Ասիպողական Գրհարութիւն . — Շուէտի պղտիկ քաղաքի մը քաղաքապետութիւնը տուրքի նոր ձեւ մը հաստատած է , հիմնուելով բնակիչներուն գիրութեան ու նիհարութեան վրայ :

Բոլոր այն անհատները որոնք 140 լիպրայէ թեթեւ կը կըշռեն , ազատ են ո' և է տուրքէ : Մինչեւ 20 լիպրանոցները՝ տարին միանուագ 20 ֆրանք պիտի վճարեն : Երեսուն ֆրանք կ'իյնայ 200է մինչեւ 250 լիպրա կշռող մարդ գլուխ :

Նիհարնալու միջոց մը կը փնտռեն բոլոր բնակիչները ի ձայն փողոյ և թմբկի :

ՏԵԿՆԵՐՆ ՍՊԱՍՈՒԷԼԵՐՆ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

(Շարուն. 36րդ Թիւէն)

ՏԵՍԱՐԱՆ Է .

ՆՈՅՆՔ ԵՒ ՏԻԿ . ՀՈՒՓՍԻՄԷ

Տիկ . Արշ . — Բարեւ , սիրելի Տիկին Հռիփսիմէ , ի՞նչպէս էք . ամէն անգամ որ հոսկէ անցնիմ , անպատճառ կը փափաքիմ քիչ մը գալ ձեզի տեսնել :

Տիկ. Հո. — Շատ աղնիւ էք Տիկին, շատ աղէկ ըրիք Տիկ. Արշալոյս: (Շուշանին դառնալով՝ կամաց մը) ես քեզի կը սորվեցնեմ, կեցիր դուն:

Տիկ. Արշ. — (Հրաչեային) Խոնարհութիւն մ'ըրէ Տիկինին, զաւակս:

Հրաչ. — Ձեմ ըներ:

Տիկ. Արշ. — Գնա՛ ձեռքը համբուրէ նայիմ, զաւակս:

Հրաչեայ. — Ձեմ համբուրեր:

Շուշ. — (Տիկ. Հռիփսիմին) Տիկին, երկու հոգիի համար աւելի պնակ զնեմ սեղանը:

Տիկ. Հո. — Բայց ինչո՞ւ (ցած ձայնով) անխելք, անկիրթ, ապուշ, կեցիր դուն (Բարձր՝ Տիկ. Արշալոյսին) Ճաշի պիտի մնաք, այնպէս չէ՞, Տիկին:

Տիկ. Արշ. — Է՛հ, թէեւ ժամանակ չունիմ, բայց խաթերդ համար... պատառ մը...

Տիկ. Հո. — Տունը ձեզի կ'սպասեն անշուշտ. գործերնուդ արգելք չըլլամ, ուրիշ ատեն եթէ կ'ուզէք հրամանեցէք:

Տիկ. Արշ. — Ո՛չ, Տիկին, ի՛նչ ընելս չեմ գիտեր ձեզի հաճելի ըլլալու համար. կ'ընդունիմ ուրեմն սան Ֆաստօն ձեր ճաշի հրաւերը:

Տիկ. Հո. — (Առանձին) Աս ինչ փորձանք էր որ գլխուս եկաւ (Կամաց մը Շուշանին) կեցի՛ր, քեզի կը հասկցնեմ:

Շուշ. — (Բարձր) Իրաւ որ, Տիկին, եթէ գիտնայի թէ...

Տիկ. Հո. — Լռէ՛... Ի՛նչ ալ աղւոր պատրաստեր ես սեղանը: Ոչ դանակ կայ, ոչ պատառաքաղ, ոչ ալ դգալ: (Իստանքն կը հանէ ինչ որ կը պակսի եւ ինք սեղանը կը դնէ): Յանցանքը իմս է գիտեմ, ասանկ անվարժ սպասուհի մը առնելու չէի քովս: Սա Շուշանն ալ ճիշդ ժամանակը գտաւ թեւը կոտրելուն. վա՛խ Շուշանս... կը ներէք անշուշտ, այնպէս չէ՞, Տիկին Արշալոյս:

Տիկ. Արշ. — Անտարակոյս, սիրելի Տիկին Հռիփսիմէ:

Հրաչ. — Անթի եմ, մայրի՛կ:

Տիկ. Արշ. — Հասկցայ, զաւակս, քիչ մըն ալ սպասէ, հիմայ պիտի ճաշենք:

Շուշ. — (Քթին ցակեմ) դուն անանկ գիտես (կուլայ):

Տիկ. Հո. — Փառանձեմ, նորէն ինչո՞ւ կուլաս:

Շուշ. — (Աւելի ուժով լալով) Հի՛, հի՛, հի՛, հի՛:

Տիկ. Հո. — Ըսէ նայիմ, ինչո՞ւ կուլաս կոր:

Շուշ. — (Միտ լալով) Ինծի յանդիմանեցիք. յանցանքը իմս չէ երբ ըսի թէ... Տիկին...

Տիկ. Հո. — Լռէ՛:

Շուշ. — ... Երբ ըսի Տիկին Արշալոյսին թէ՛ դուք դուրս ելած էիք ձեր քեռորդիներուն հետ :

Տիկ. Հո. — Լռէ՛ կ'ըսեմ կոր քեզի, ստախոս, ես ատանկ բան ըսի՞ (Արշալոյսին՝ որ ոսփի կ'ելլէ զարմանով) Մի՛ հաւատաք, Տիկին, սուտ է :

Շուշ. — (Լալով) ... Եւ թէ դուք ճաշի չպիտի կրնաք դալ ... հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ :

Տիկ. Հո. — Սուտ է, Տիկին, սուտ է (կամաց մը) Աստուած չնորհք տայ, թէ՛ քեզի և թէ Տիկին Արշալոյսին :

Շուշ. — Ե՛ս, ստախո՛ս... Ինծի ստախոս կ'ըսէք, դուք չէի՞ք որ թեւիս կամաց մը զարկիք երբ եկայ իմացնել ձեզի թէ երկու հոգիի համար պնակ աւելի դնել պէ՞տք է սեղանը, հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ :

Տիկ. Հո. — Բայց... :

Տիկ. Արշ. — (Բարկութեամբ՝ Տիկին Հռիփսիմէին) Տիկին՝ Հռիփսիմէ, ինծի նայէ, Տիկին Հռիփսիմէ, այս եղած դարձածները շատ անվայել բաներ են :

Տիկ. Հո. — Բայց իմ սիրելի Տիկին Արշալոյս, կ'երդնում թէ... :

Տիկ. Արշ. — Տիկին Հռիփսիմէ, ճշմարտութիւնը տղոց բերնէն է որ կ'ելլէ. Ձեր այս վարժունքին համար խելք չեմ կրնար հասցունել և մէյ մըն ալ ոտքս ձեր անիծեալ դռնէն ներս չպիտի դնեմ: Եկո՛ւր, Հրաչեայ :

Հրաչ. — Ձէ՛, մայրիկ, ես չեմ երթար, ես անօթի եմ.

Տիկ. Արշ. — (Ուժով մը փաշելով Հրաչեան). — Եկո՛ւր, կ'ըսեմ կոր քեզի: (Տիկ. Հռիփսիմէին) Ո՛չ, Տիկին, մէյ մըն ալ ոտքս բնաւ ձեր տունը չպիտի կոխեմ :

(Պուրս կ'ելլէ, Հռիփս. ալ ետեւէն՝ ներուղութեան բառեր ըսելով)

(Շարունակելի)

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

Հանրագիտակի Մեծ. Բաժանորդներէ և Գործակալներէ կը խնդրենք որ բաժանորդագիտներէ և յանձնարարութիւններէ մընացած պարտքերնին վճարել բարեհաճին այլևս, որովհետեւ տարւոյն Ուրի ամիսը լրանալէն վերջը՝ դեռ շատ տեղեր սոյնօրինակ հաշիւներ անվճար կը մնան :

Հանրագիտակի **30** քիւին մեջ հրատարակուած Մամարգային
Հարցումներուն պատասխանը

1. — Առէք սիկառի թուղթ մը եւ կամաց մը ջուրին երեսը
դրէք յետոյ ասեղն ալ թղթին վրայ դրէք. թուղթը ջուրը ծը-
ծելով կամաց կամաց կ'սկսի ջուրին յատակը իջնել, իսկ ասեղը կը
մնայ ջուրին երեսը:

2. — Մատերնիդ իւզոտելով ջուրին մէջ խօթեցէք. հողը կը
փախչի ու ամանին եզերքը կը հաւաքուի:

4. — ՏԱՆՁ:

Ճիշդ պատասխանեցին Պարոնայք Յովհաննէս Գ. Տէրտէրեան
Տիարպէքիր. եւ Արմենակ Պ. Մանուկեան Էրպա'աէն:

3. — Պատին բարձրութիւնն է 12 մէթր, զոր լուծեց Պրն.
Արշակ Կ. Սէֆերեան:

Հանրագիտակի **32** թիւին մէջ եղած նկարհանելուկը ճիշդ
լուծեց Պ. Արշակ Կ. Սէֆերեան:

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ



Ծաղիկներով լեցուն կողով մը եւ գլխարկ մը կ'ի տեսնուի,
բայց ո՞ր է ծաղկավաճառը

ԽՄԱԳԻՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԵՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳԻԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

• Կ. Պոլիս, Պապը Ալի ծատտէսի, Թիւ 33, Մանգումէի տպարանին կից

ДЕРЖАВА ИМПЕРАТОРА

201115

ИМПЕРАТОРА

ИМПЕРАТОРА

ИМПЕРАТОРА

ИМПЕРАТОРА

ИМПЕРАТОРА

ИМПЕРАТОРА

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Տ Պ Ա Ր Ա Ն Ը
Փոխադրուած ըլլալով՝

ՊԱՂԾ, ՊԱՊԸ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻՒ ՅՑ. ԻԳՏԱՄ ԼԲԱԳՐԻ ԴԷՄ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ <sup>եւ կը սպազրէ ամէն
սեսակ գիրքեր, մահ-
ազդեր, հանդէսներ, ԵՐԶԱՔԵՐԱԿԱՆՆԵՐ, հարսանիքի հրաւիրագիրներ,
նամակազուխներ, այլաբարդեր, եւ սպազրութեան վերաբերեալ ա-
մէն սեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական 2000է աւելի
պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի:</sup>

Անմրցելի մատուցիւն եւ նշոյապահութիւն:

Գաւառներէն ալ կ'ընդունի ամէն սեսակ յանձնարարութիւններ: